ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 171 – Ա **08 մայիսի 2020թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 6 - Ի N 278 - Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2018 թվականի նոյեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության համակարգումը վերապահելու մասին» N 278 - Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշումը շարադրել նոր խմբագրությամբ՝

«ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՔ ԱՊԱՀՈՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 8-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին, 5-րդ, 9-րդ, 10-րդ մասերի և 19-րդ հոդվածի դրույթներով

որոշում եմ՝

1. Առանձին բնագավառների, գործառույթների և դրանք ապահովող Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների, մարզային ենթակայության կազմակերպությունների գործունեության համակարգումը վերապահել՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին՝

ա. ֆինանսական և սոցիալ- տնտեսական զարգացման վարչություն
/ֆինանսների բնագավառ/.
բ. քաղաքաշինության վարչություն
/քաղաքաշինության, տրանսպորտի ու ճանապարհաշինության բնագավառներ/.
գ. կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
/կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության բնագավառներ/.
դ. առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն
/առողջապահության և սոցիալական պաշտպանության բնագավառներ/.
ե. զորահավաքային նախապատրաստության բաժին
/պաշտպանության կազմակերպման բնագավառ/.
զ. իրավաբանական բաժին.
է. տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին.
ը. մարզային ենթակայության առողջապահական հաստատություններ
/առողջապահության բնագավառ/.
թ. մարզային ենթակայության պետական ուսումնական հաստատություններ
/կրթության բնագավառ/.

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալին՝

ա. գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն
/գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառներ/.
բ. տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչություն
/քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառներ/.
գ. զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժին
/տնտեսության զարգացման բնագավառ/.
դ. հողաշինարարության և հողօգտագործման բաժին
/հողօգտագործման բնագավառ/.
ե. ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին.

3) կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության բնագավառում Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի լիազորությունների իրականացման աջակցման որոշակի աշխատանքների, ծրագրերի համակարգումը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի խորհրդական Վահագն Դաբաղյանին.

4) ֆինանսների բնագավառում Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի լիազորությունների իրականացման աջակցման որոշակի աշխատանքների, ծրագրերի համակարգումը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի խորհրդական Նարեկ Մանուկյանին.

5) տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բնագավառում Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի լիազորությունների իրականացման աջակցման որոշակի աշխատանքների համակարգումը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի օգնական Լիանա Հովհաննիսյանին:»:

08.05.22020

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

Подписано: SANOSYAN GNEL 1710830069

ՄԱՐԶՊԵՏ՝

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Գավառ